ԿԱՐԾԻՔ

Նինել Գագիկի Սարգսյանի «Արմեն Մարտիրոսյանի բանաստեղծական աշխարհը» թեկնածուական ատենախոսության մասին

Արմեն Մարտիրոսյանը հետսևակյան շրջանի ինքնատիպ բանաստեղծներից մեկն է, և եթե այդ շրջանի բանաստեղծներից Հենրիկ Էդոյանի, Արտեմ Հարությունյանի, Հովհաննես Գրիգորյանի, Հրաչյա Սարուխանի, Վարդան Հակոբյանի ստեղծագործություններն արժանացել են առանձին քննության, ապա Արմեն Մարտիրոսյանը մնացել է ստվերում: Ճիշտ է, նրա առանձին ստեղծագործությունների մասին գրվել են գրախոսականներ, 20-րդ դարակեսի շրջանի պոեզիայի ընդհանուր համապատկերում արվել են դիտարկումներ (Ալեքսանդր Թոփչյան, Ազատ Եղիազարյան, Վահե Օշական), սակայն նրա պոեզիան չի արժանացել առանձին, համակարգված ուսումնասիրության: Բացառություն կարող է կազմել գրականագետ Սուրեն Աբրահամյանի «Արդի հայ պոեզիայի գեղարվեստական համակարգը» ուսումնասիրությունը, որտեղ ընդհանուր գծերով ներկայացված է նաև Արմեն Մարտիրոսյանը:

Նինել Սարգսյանի ուսումնասիրությունը Մարտիրոսյանի պոեզիան ժամանակի գրական զարգացումների զուգահեռներում համակարգված ներկայացնելու առաջին փորձն է, որի մասին հենց մեր կարծիքի սկզբում ցանկանում ենք ընդգծել՝ հաջողված փորձը:

Սկսենք կառուցվածքից: Ատենախոսն ընտրել է այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տալիս հետևելու բանաստեղծի որոնումների ընթացքին: Գլուխ առաջին՝ «Որոնումների առաջին հանգրվանում»՝ երկու ենթագլուխներով՝ «Արմեն Մարտիրոսյանի պոեզիան 1960-2000-ական թթ. գրական զարգացումների համապատկերում» և «Հոգևոր սննդի» որոնման ու «Վարպետության դասեր» առնելու ճանապարհին», գլուխ երկրորդ՝ «Ժամանակը բոլոր չափումներով», որը նույնպես կազմված է երկու ենթագլուխներից՝ «Ժամանակների կապի բանաստեղծական ընկալումները», «Ներկայում հանգրվանող անցյալ», և գլուխ երրորդ՝ «Բառը գույնի, լույսի, հավատի ու սիրո համապատկերում» (պոետիկայի հարցեր)):

Բանաստեղծի ստեղծագործական ուղին ատենախոսը պայմանականորեն բաժանում է երկու շրջանի՝ 1970-1980 և 1990-2000-ական թվականներ:

1970-1980-ական թվականները ներկայացնում է որպես որոնումների առաջին շրջան: Այդ հանգրվանում բանաստեղծը «հոգևոր սնունդ» է որոնում և «վարպետության դասեր» առնում Նարեկացու, միջնադարյան տաղերգուների, Տերյանի, Չարենցի, ռուս և համաշխարհային գրականությունների էջերում, ժողովածուից ժողովածու հղկում է ոճը, կատարելագործում իր ստեղծագործական վարպետությունը:

Երկրորդ՝ 1990-2000-ական թթ. բանաստեղծությունները, որոնք զետեղված են «Շարակնոց», «Ժամերգություն», «Ներաշխարհի լռությունը», «Արգելված պտուղը» ժողովածուներում, ատենախոսը համախմբում է թեմատիկ-գաղափարական առանցքների շուրջ, որը մեր կարծիքով ավելի ճիշտ մոտեցում է, քան ժողովածուների առանձին-առանձին քննությունը: Այս եղանակը հնարավորություն է տալիս բացահայտելու բանաստեղծի աշխարհայեցողության սկզբունքները, ժամանակի շարժընթացի մասին նրա պատկերացումները:

Ա. Մարտիրոսյանը չի թվագրում իր բանաստեղծությունները. հենց այս հանգամանքն է ատենախոսին թելադրել քննությունը տանել ոչ թե ժամանակագրական կարգով, այլ թեմատիկ համախմբման ճանապարհով, ինչը, բանաստեղծի խոսքերով ասած, «ընթերցողին թույլ կտա ժամանակի միջով ազատորեն ետ ու առաջ քայլել, տողերի միջից տեսնել թե ինչպիսի՞ն է Արմեն Մարտիրոսյանը 30-40 տարի առաջ, ուսուցման ինչպիսի սանդուղքներով է անցել և ո՞ւր է հասել»:

Առաջին գլխում՝ «Մարտիրոսյանի պոեզիան գրական զարգացումների նոր շրջափուլում (1960-2000-ական թթ.)», ատենախոսն անդրադառնում է սերնդի բանաստեղծների շուրջ ծավալված բանավեճերին, քննարկումներին, որոնց ակտիվորեն մասնակցում էին նաև Հ. Էդոյանը, Ա. Հարությունյանը, Հր. Սարուխանը, և հանգում է հետևյալ եզրակացությանը. սերնդի բանաստեղծները գրականություն բերեցին «աշխարհընկալման նոր մեթոդներ, անհատի ու հասարակության, անհատի ու ժամանակի, մարդու և բնության հարաբերությունների նոր պատկերացումներ»: Նրանց համար «այլևս խորթ էին գաղափարախոսական կապանքներն ու պարտադրանքները, օրացուցային ձևերն ու փառաբանությունները: Սերնդի ուշադրության կենտրոնում դարակեսի նոր զարգացումների

համապատկերում ինքն իրեն ճանաչել ցանկացող, իր ինքնությանն ու արժանապատվությանը նախանձախնդիր անհատն է՝ իր մտահոգություններով, դրամատիկ ապրումներով»:

Ատենախոսը ոչ միայն ներկայացնում է բանավիճողների կարծիքները, այլև բանավիճում է նրանց հետ (օրինակ, Վահե Օշականի և Հովիկ Մուսայելյանի), ինչը, անտարակույս, արժանի է խրախուսանքի: Խրախուսանքի է արժանի նաև այն, որ ատենախոսը չի տարվում բանաստեղծի մասին միայն գովեստի խոսքեր ասելով: Նա նաև արտահայտում է իր քննադատական տեսակետը՝ առաջին ժողովածուների, հատկապես՝ հայրենասիրական բանաստեղծությունների վերաբերյալ, ինչպես Հ. Սահյանը կասեր, դրանք համեմատելով «հանգավոր ճառի» հետ:

Երկրորդ գլխի՝ «Ժամանակը բոլոր չափումներով», «Կողմնորոշման չափանիշների ու թեմատիկ ընդգրկումների ճշգրտման փորձերը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բանաստեղծի ստեղծագործական ուղին, ընդգծում, որ նա կտրում է «հանգավոր ճառի» երակը: Սակայն, չնայած որոշ «հանգավոր ճառերի», «Բանաստեղծություններ» և «Թռչուններ» ժողովածուներից է «սկիզբ առնում մեր պոեզիայի՝ դարերից եկող լույսի, լինելության, վերընձյուղվելու մայր երակը, որը հետագա ժողովածուներում տրոփում է ավելի լիարյուն հոսքով»: Բանաստեղծը ստեղծում է իր մոլորակը և նշում, որ այստեղ՝ այս հողի վրա, սերն ապրում է կարկատաններով, իսկ այնտեղ՝ երկնային ծովի ամպերի արծաթ-հորիզոններում, «ոսկե ձկնիկը»՝ խավարի: Այստեղ մեզանից հեռացած հին տարիների տխուր լուսապսակն է, այնտեղ սերն է առանց կարկատան»:

Բանաստեղծի ստեղծագործական ուղին ատենախոսը ներկայացնում է ժամանակի «բաց» և «ներփակ», «գծային» և «ցիկլային» չափումներում: Բոլոր դեպքերում նրա մտորումների առանցքում հայրենիքն է՝ իր հերոսական ու հոգևոր մաքառումներով, և հայրենիքին նվիրյալ անհատը:

Գլխի երկրորդ՝ «Ներկայում հանգրվանող անցյալ» ենթագլուխը, կարծում ենք, ամենահաջողվածն է ենթագլուխների մեջ: Ատենախոսն ընդգծում է, որ «Ա. Մարտիրոսյանը հենց այնպես չի անդրադառնում պատմական անցյալին, այլ շեշտում է, որ ներկան նորի ծնունդն է՝ ծագող ժամանակով իրականացվող, անցյալ ժամանակից եկող ինֆորմացիայի հիման վրա: Անցյալը գոյություն ունի այնքանով, որքանով նրա մեջ պահպանվել է ներկայի

կառուցվածքային էներգիան»: Նա հայացքն ուղղում է դեպի միջնադար, որը դառնում է ոգեշնչման աղբյուր, թարմ լիցքեր է հաղորդում բանաստեղծություններին: Դա ակնառու կերպով երևում է «Միջնադարի առավոտը» շարքում: Բանաստեղծի եզրակացությունն այն է, որ ոչ թե փոքր, այլ փոքրաքանակ ժողովուրդները չեն հայտնվել պատմության լուսանցքներում, որովհետև հարատևել են ինչպես հերոսամարտերով, այնպես էլ հոգևոր մաքառումներով:

Երկիրը ծանր ժամանակներ է ապրում (հասարակության աննախադեպ շերտավորում, արտագաղթ և այլն), բայց բանաստեղծի համար դրախտն իր երկիրն է, «ինչքան էլ բարբարոս սադայելները վիրապներ փորեն նրա ոտքերի տակ»:

Բանաստղեծի որոնումները շարունակվում են մանկական ստեղծագործությունների ժողովածուներում, և մենք կիսում ենք ատենախոսի այն մտահոգությունը, որ ոչ միայն Ա. Մարտիրոսյանի, այլև մեր մնացած մանկագիրների ստեղծագործությունները դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Եվ ցավալի է, որ նույնիսկ անվանի գրականագետներից ոմանք այդ ստեղծագործությունները լուրջ չեն ընդունում:

Երրորդ գլխում՝ «Բառը գույնի, լույսի, հավատի ու սիրո համապատկերում (պոետիկայի հարցեր)», ատենախոսն անդրադառնում է Ա. Մարտիրոսյանի պոեզիայի ձևակառուցվածքային, պատկերաստեղծման ու կերպարակերտման առանձնահատկություններին և ընդգծում, որ բանաստեղծը պատասխանատվության բարձր զգացումով է նստում սպիտակ թղթի առջև, «բանաստեղծական կառույցի մեջ մեծ ճիգով խցկված բառեր չի հանդուրժում»: Նրա պատկերացմամբ՝ «բառը պիտի լինի հեթանոսորեն մերկ, թափանցիկ, պիտի հանդիսանա այնկողմնայինին (տրանսցենդենտալին) հաղորդակցվելու, այնտեղ թաքնված խորհրդանիշների միջոցով աշխարհը ճանաչելու, ժամանակի շարժընթացին համաչափ տեղաշարժվելու հնարավորություն ընձեռնող բանալի»:

Բանաստեղծի համար, ինչպես ինքն է ասում, «Բառերը դադարում են բառարանային իմաստների նեղ ու անձուկ կաղապարներ լինելուց: Նրանք ամենից առաջ գույն են, հավատ, սեր, մկրտություն»: «Բառերն, այսպիսով, ինչպես գրում է Սերգեյ Սարինյանը, պետք է հանդես գան որպես «իրերի որոշակի դասավորություն, երևույթների ընկալման դիտակետ, աշխարհայացք, փիլիսոփայություն, պոեզիայի տարրեր, որոնք կազմավորում են բանաստեղծության տաղաչափությունն ու մորֆոլոգիան»:

Ատենախոսը ներկայացնում է Ա. Մարտիրոսյանի բանաստեղծությունների գունային համակարգը և նշում, որ բանաստեղծը գույնի և մեղեդու ներդաշնակությամբ է ներկայացնում իր աշխարհը, այնտեղ տեսնում անտեսանելին և լսում անլսելին: Ատենախոսի ընդհանուր եզրակացությունն այն է, որ անցնելով դժվարին, խոչընդոտներով լեցուն ճանապարհ, «վարպետության դասեր» առնելով ու «հոգևոր սնունդ» որոնելով հայ և համաշխարհային գրականության էջերում, Ա. Մարտիրոսյանը սահմանագծեց բանաստեղծության իր տարածքը, ստեղծեց բանաստեղծության իր մոդելը:

Այժմ մի քանի դիտարկումներ, որոնք աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու մտադրություն ունեն:

1. Ատենախոսն ընտրել է ուսումնասիրության բովանդակությանը համահունչ կառուցվածք: Սակայն, կարծում ենք՝ ավելի նպատակահարմար կլիներ առաջին գլխի ենթագլուխների հաջորդականությունը փոխել. նախ ներկայացնել բանաստեղծի որոնումների հանգրվանները, ապա նոր միայն դրանք՝ նոր շրջափուլի ընդհանուր համապատկերում:

2. Կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ մանկական ստեղծագործությունները ներկայացնել առանձին ենթագլխով՝ ավելի ընդգծելու համար մանկական գրականության կարևորությունը և նախադեպ ստեղծելու դրանց լուրջ ուսումնասիրության համար:

3. Կարելի էր թեկուզ համառոտ անդրադառնալ նաև «Մազե կամուրջ» վեպին և անել մի շարք համեմատություններ, հատկապես՝ պատկերաստեղծման ոլորտում:

4. Նկատելի են նաև որոշակի տեխնիկական խնդիրներ:

Նշենք, որ սրանք անձնական դիտարկումներ են, որոնք բացարձակապես չեն ստվերում աշխատանքը և կարող են վիճարկելի լինել ատենախոսի կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. Նինել Սարգսյանը պաշտպանության է ներկայացրել ինքնուրույն, գրականագիտական պատշաճ մակարդակով գրված ուսումնասիրություն, որը Ա. Մարտիրոսյանի պոեզիան արժևորելու առաջին փորձն է: Ուսումնասիրության ընթացքում արված եզրահանգումները համապատասխանում են աշխատանքի բովանդակությանը, հրատարակած ինը հոդվածները և մենագրությունը լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Հաշվի առնելով այս ամենը՝ գտնում ենք, որ Ն. Սարգսյանն արժանի է իր հայցած գիտական աստիճանին, ինչի համար միջնորդում ենք գիտական աստիճաններ շնորհող 003 խորհրդին:

Ընդդիմախոս՝ բ. գ. թ., դոցենտ Վահան Արշակի Աղաբաբյան

Հաստատում եմ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Հայոց լեզվի և գրականություն» ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանի ստորագրությունը

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Պ. Պողոսյան

26.11.2021թ.